րոյ եւ ի բոլոր քաղաքէս ժողովեաց ԳԾ ղուռուշ եւ գնացեալ ազատեաց զպերի եղեալ զորդիսն ի գերողէն Թաթարէ:

Բշի օրս (30 Յուլիս) ի հասարակելն մի ձայն ելաւ մեծի, որ զխանութսն և զշուկայսն փակեցին թէ Ջվէզիրն սպանանեն ի պալատ թագաւորին տանելով: Պըրծաւ և ի դուրս եկն. կրկին զնա առեալ տարան Ը-րդ ժամուս, և կրկին նա ևս երեկոյիս դուրս երեկ, զի ունէր մօտ առ արքայն բարեկամս և սիրելիս, այլ և ի դուրսս, վասն որոյ և զնոսա ընծայիւք և դրամով լցոյց եւ նստաւ յիշխանութիւնն իւր վէզիրի: Բայց պատճառն այս էր այսմ լինելոյ, զի յաւուրս Պայրամին իւրեանց խորհուրդ առնէ Մուրատն հանդերձ իւրովքն և առաքէ ծածկաբար զքէհայէկն առ մուֆտին եթէ Տաս մեզ ֆէթվա զի զթագաւորն փոխեսցեմք. և մուֆտին արհամարհէ զնա և ի դուրս հանէ: Եւ յետ սակաւ աւուրց մտեալ մուֆտին առ արքայն և զեկուցանէ թէ Վէզիրն զայս ինչ դարան ունի գործել քեզ, զի՞ մնաս յայդր. բերցես ի ներս զնա և սպանցես հանդերձ խորհրդակցովքն: Վասն որոյ և արքայն ի բարկութիւն հարեալ՝ բերել ետ օրս առաջի իւր և չկարաց գծծել զի զնա փոխեսցէ կամ սպանցէ, զի նախարարք թագաւորին Սուտ է, ասէին արքային, այդ բան՝ վասն վէզիրին. և յաղթեաց կողմն վէզիրին ոչ մնասել իւրն:

Բայց և օրս Դշիս որ Օգոստոս մտանէ, կրկին և մուֆտին առ արքայն երթայ եւ ոչ հանդուրժէ, թէ եւ վէզիրին ոչ գծծեցին բան ինչ առնել: Ջտէֆտէրտարն փոխեցին և ետուն Սօֆի Մուհամէտ փաշային. եւ զենէնկիչէր աղասին եւս փոխեցին եւ եդին զմեծ իմռահօր արքային՝ Մուստաֆայ զինով. և զքէհայէկն ևս և եդին զ (դարդ): Եւ զբարեկամս և զսիրելիս